Հաստատված է
Տնօրինության 23.09.2025թ.-ի
Թիվ DEC 12-82 արձանագրությամբ
Ուժի մեջ է 01.10.2025թ.-ից

«ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏՈՒՓԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ			
Վարձակալության ժամկետ	**Փոքր (սմ)**	**Միջին (սմ)**	**Մեծ (սմ)**
	4.9x30x40	**11.8x30x40**	**15.2x30x40**
30 օր	**10,000 ՀՀ դրամ**	**15,000 ՀՀ դրամ**	**20,000 ՀՀ դրամ**
90 օր	**15,000 ՀՀ դրամ**	**25,000 ՀՀ դրամ**	**30,000 ՀՀ դրամ**
180 օր	**25,000 ՀՀ դրամ**	**35,000 ՀՀ դրամ**	**40,000 ՀՀ դրամ**
365 օր	**35,000 ՀՀ դրամ**	**45,000 ՀՀ դրամ**	**55,000 ՀՀ դրամ**

Այլ պայմաններ.

1. Բանկի պահատուփերի ծառայությունից կարող են օգտվել 18 տարեկանը լրացած ֆիզիկական անձինք, ովքեր նաև հանդիսանում են Բանկում հաշվետեր:
2. Բանկը պահատուփային ծառայություն է մատուցում Բանկի «Թումանյան» մասնաճյուղում, որը գտնվում է՝ ք. Երևան, Թումանյան փողոց, 24 շենք, 48 տարածք հասցեում:
3. Պահատուն կարող է մուտք գործել Պահասենյակ յուրաքանչյուր օր 24/7 աշխատանքային գրաֆիկով:
4. Հաճախորդի կողմից անհատական պահատուփի բանալու կորստի հետևանքով բանալու կրկնօրինակի պատրաստման կամ անհատական պահատուփի վերանորոգման համար Բանկի կրած ծախսերը հատուցում է հաճախորդը, ընդ որում՝ բանալին կորցնելու դեպքում գանձվում է 15 000 ՀՀ դրամ:
5. Վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատուփը հաճախորդի կողմից չազատելու դեպքում վարձակալության պայմանագիրը յուրաքանչյուր անգամ ավտոմատ կարգով երկարաձգվում է դրանում նշված ժամկետով՝ Հաճախորդի հաշվից(հաշիվներից) գանձելով տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված վարձավճարը: Նշված եղանակով երկարաձգումները կատարվում են այնքան, մինչև հաճախորդի հաշվին(հաշիվներին) առկա գումարը բավարարում է սակագինը գանձելու համար՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում տվյալ պահի դրությամբ Բանկի կողմից առքի համար սահմանված անկանխիկի փոխարժեքով: Հաճախորդի հաշվին(հաշիվներին) երկարաձգման վարձավճարի բացակայության դեպքում Հաճախորդը պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճար (Բանկի կողմից պայմանագրի կետանցի ժամանակ կիրառվող տույժ)՝ 500 ՀՀ դրամի չափով:
6. Պայմանագրի ժամկետի ավարտից երեք ամիս հետո պահատուփը հաճախորդի կողմից չազատելու դեպքում Բանկն իրավունք ունի իր ներքին իրավական ակտով սահմանված ընթացակարգով բացել անհատական պահատուփը և մինչև հաճախորդի ներկայանալը պահատուփի պարունակությունն ի պահ վերցնել իր դրամապահոցում: Այդ դեպքում հաճախորդը յուրաքանչյուր օրվա համար վճարում է 500 ՀՀ դրամի չափով դրամապահոցում արժեքների պահատվության վճար, իսկ վարձակալության պայմանագիրը չերկարաձգելու համար յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվող վճարի հաշվարկը դադարում է:
7. Բանկը սույն պայմանների 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ծախսերն անակցեպտ կերպով գանձում է Հաճախորդի հաշվում(ներում) առկա դրամական միջոցներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում Բանկի կողմից առքի համար սահմանված անկանխիկ փոխարժեքով:
8. Հաճախորդն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով Բանկին և վճարելով անհատական պահատուփի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ: Այս դեպքում Բանկը վճարված կամ հաշվարկված միջնորդավճարի վերահաշվարկ չի կատարում:
9. Մեկ պահատուփում պահվող արժեքների կամ իրերի առավելագույն քաշը չի կարող գերազանցել 25 (քսանհինգ) կիլոգրամը: